

Կանաչ Ճարտարապետություն
Էներգաարդյունավետություն և վերականգնվող էներգիա

Green Architecture

Energy Efficiency & Renewable Energy



The textbook is developed and published in the framework of "Improving Energy Efficiency in Buildings" UNDP-GEF project.

web-site: www.nature-ic.am
www.am.undp.org

ISBN 978-9939-1-0230-6

ԳԼԽԱՎՈՐ ԳԵՐԻՆԱԿ | LEAD AUTHOR

Ալեն Ամիրխանյան
Alen Amirkhanyan

ՀԱՄԱԳԵՐԻՆԱԿՆԵՐ | CONTRIBUTING AUTHORS

Տիգրան Սեկոյան [մոդուլներ | modules 5; 6; 7; primary author of]
Tigran Sekoyan [module 9 | մոդուլ 9-ի հիմնական հեղինակ]

Ռուբեն Համբարձումյան [մոդուլ | module 5]
Ruben Hambartsumyan

Արտակ Համբարյան [մոդուլ | module 6]
Artak Hambarian

Module 4

ENERGY EFFICIENCY IN BUILDINGS: PASSIVE SOLUTIONS



Մոդուլ 4

ԾԵՆՔԵՐԻ ԷՆԵՐԳԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ. ՊԱՍԻՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ



Module 4
**ENERGY EFFICIENCY IN BUILDINGS:
PASSIVE SOLUTIONS**



Մոդուլ 4
**ՇԵՆՔԵՐԻ ԷՆԵՐԳԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ.
ՊԱՍԻՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ**

Module 4

Մոդուլ 4

Module Plan and Learning Outcomes	113	Մոդուլի պլանը և ուսուցման արդյունքները
Core Concepts	113	Հիմնական հասկացությունները
INTRODUCTION	114	Ներածություն
BUILDING ORIENTATION	115	Շենքի կողմնորոշումը
SHADING	118	Ստվերում
DAYLIGHTING	121	Ցերեկային լուսավորություն
COOL ROOFS	126	Հով տանիքներ
GREEN ROOFS	131	Կանաչ տանիքներ
NATURAL VENTILATION	135	Բնական օդափոխություն
Reading List	142	Ընթերցանության նյութեր
Audiovisual Material	142	Տեսաձայնային նյութեր
Discussion Questions	142	Հարցեր բանավեճերի համար

Module Plan and Learning Outcomes

PLAN:

Outline and explain the core concepts for passive solutions to gain energy efficiency in buildings.

Student Learning Outcomes:

- Demonstrate understanding of the core concepts of passive solutions for energy efficiency in buildings;
- Be able to explain the difference between passive and mechanical solutions to creating thermal comfort, ventilation, and visual comfort;
- Be able to identify examples of passive solutions.

Core Concepts

Building orientation
 Solar position
 Heat-island effect
 Thermal mass
 Shading (planting, structures, and massing)
 Daylighting
 Light shelf
 Albedo
 Solar reflectance
 Thermal emittance

Solar reflectance index (SRI)
 Cool roof
 Green roof (extensive, semi-intensive, intensive)
 Natural ventilation
 Windcatcher
 ASHRAE Standard 62
 Mechanical ventilation
 Forced ventilation
 Hybrid ventilation
 Infiltration
 Wind direction (windward, leeward)
 Pressure (positive and negative)
 Stack ventilation
 Buoyancy of air
 Solar chimney

Մոդուլի պլանը և ուսուցման արդյունքները

ՊԼԱՆ

Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացմանն ուղղված պասիվ լուծումների հիմնական սկզբունքների նկարագրումն ու բացատրությունը:

Ուսանողների ուսուցման արդյունքները.

- Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացմանն ուղղված պասիվ լուծումների հիմնական սկզբունքների հասկացության ցուցաբերում,
- Ջերմային հարմարավետության, օդափոխության և տեսանելի հարմարավետության ստեղծմանն ուղղված պասիվ և մեխանիկական լուծումների տարբերության բացատրության ունակության,
- Պասիվ լուծումների օրինակների հասկացության ունակության ցուցաբերում:

Հիմնական հասկացությունները

Շենքի կողմնորոշում
 Արեգակի դիրք
 Ջերմային կղզյակի էֆեկտ
 Ջերմային զանգված
 Ստվերում (բուսականություն, կառուցվածքային և ծավալային լուծումներ)
 Բնական լուսավորություն
 Լուսային շելֆ (հետք)
 Ալբեդո
 Արեգակի ճառագայթման անդրադարձումը (անդրադարձելիություն)
 Ջերմային ճառագայթում
 Արեգակնային անդրադարձման ինդեքս (ԱԹԻ)
 Հով տանիք
 Կանաչ տանիք (էքստենսիվ, կիսահետենսիվ և ինտենսիվ)
 Բնական օդափոխություն
 Հողմորսիչ
 ASHRAE 62 ստանդարտը
 Մեխանիկական (ստիպողական) օդափոխում
 Ստիպողական ներածող օդափոխում
 Հիբրիդ օդափոխում
 Ինֆիլտրացիա (օդի ներթափանցում)
 Քամու ուղղություն (հողմակողմ, հողմահակառակ)
 Ճնշում (դրական և բացասական)
 Շերտային օդափոխում
 Օդի դուրս մղման ուժ
 Արեգակնային խողովակ (ծխնեղույզի նմանակ)

INTRODUCTION

To have thermal comfort and adequate ventilation, very often energy needs to be expended, i.e. we need to burn natural gas, consume electricity, or some other resource to increase or decrease temperatures, humidity, or air flow in our rooms or buildings to increase our level of comfort.

The challenge for architects and engineers is to design buildings that will require minimal energy inputs for desired thermal, ventilation, and lighting comfort. While this sounds like an obvious point, most building design in the post-World War II (WWII) era has taken the availability of abundant and inexpensive fuel and electricity for granted.

Building design from ancient times often relied on ingenious use of the forces of nature to create comfortable interior environments. Wind catchers in deserts and hot countries used movements of wind and flows of underground water to cool the interior of buildings without energy input. Buildings were massed to create narrow alleys, which in turn increased shading and wind flow in the summer. To increase the flow of light into rooms, angles of walls framing the windows were modulated to let in more light throughout the day. In deciding on the location of a building, southerly exposure to the sun was a key decision factor going as far back as cave dwellers.

Collectively, many of these solutions have come to be known as “passive” solutions. These are solutions that, by use of clever and often simple and inexpensive techniques, reduce the demand for energy inputs in building operations. These solutions are in contrast to mechanical solutions, such as heating, air conditioning, and mechanical ventilation units in widespread use, especially after WWII in Western countries. This trend is rising rapidly worldwide.

With increased emphasis on environmentally sustainable architecture, there is a re-emergence of interest in “passive” solutions. This module will discuss several “passive” solutions, including building orientation, natural ventilation, passive cooling, daylighting, shading, cool roofs, etc.

Later modules will discuss another set of passive solutions related to the building envelope, i.e. building cladding; the insulation

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ջերմային հարմարավետություն և համապատասխան օդափոխում ունենալու համար շատ հաճախ անհրաժեշտ է էներգիա ծախսել: Իսկ դա նշանակում է, որ մենք պետք է բնական գազ վառենք, կամ էլեկտրականություն օգտագործենք, կամ էներգիայի մեկ այլ աղբյուրից օգտվենք, որպեսզի մեր կացարաններում կամ շենքերում բարձրացնենք կամ իջեցնենք օդի ջերմաստիճանն ու խոնավությունը, ապահովենք օդի շրջանառությունը և, այսպիսով, բարձրացնենք մեր կեցության հարմարավետության մակարդակը:

Ճարտարապետների և ճարտարագետների խնդիրը այնպիսի շենքերի նախագծման մեջ է, որոնք ի վիճակի գտնվեն՝ օգտագործելով նվազագույն քանակությամբ էներգիա, ապահովել ցանկալի ջերմային, օդափոխման և լուսավորության հարմարավետություն: Չնայած այս ամենը թվում է բավական ակնհայտ ու տրամաբանական, այնուամենայնիվ, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նախագծված շենքերի մեծամասնության հեղինակներն ընդունել են էժան ու մատչելի վառելիքների և էլեկտրաէներգիայի առատության կանխավարկածը:

Կացարանների ներքին հարմարավետության ստեղծման համար դեռևս հնագույն ժամանակներից շենքերի նախագծումը հիմնվել է բնության ուժերի օգտագործման վրա: Անապատային կամ շոգ երկրներում հողմորսիչները և ստորգետնյա ջրերի հոսքերն օգտագործվել են առանց էներգիա ծախսելու կացարանների ներսը հովացնելու նպատակով: Խիտ շինարարության արդյունքում առաջանում էին նեղլիկ փողոցներ և նրբանցքներ, որոնք մեծացնում էին ստվերումը և քամու հոսքն ամառային շրջանում: Ամբողջ օրվա ընթացքում բնական լույսի հոսքը դեպի սենքերը մեծացնելու նպատակով փոփոխում էին պատուհանների շուրջ պատի հատվածների թեքման անկյունները: Շենքերի կողմնորոշման վերաբերյալ որոշման ընդունման ժամանակ հատուկ ուշադրություն էին դարձնում հարավային կողմնորոշմանը՝ այն համարելով կարևոր գործոն դեռևս քարանձավային մարդկանց ժամանակաշրջանում:

Ընդհանուր առմամբ՝ այդ լուծումների մեծ մասը հայտնի է «պասիվ լուծումներ» անվամբ: Այլ կերպ ասած՝ դրանք լուծումներ են, որոնցում օգտագործվում են պարզագույն և ողջամիտ, հաճախ ոչ թանկարժեք տեխնիկական միջոցներ, որոնք թույլ են տալիս կրճատել էներգիայի պահանջարկը շենքի շահագործման ամբողջ ժամանակահատվածում: Այդ լուծումներն


of walls, roof, and flooring; elimination of thermal bridges; appropriate selection and installation of windows and doors.

Building Orientation

How a building is positioned in relation to the sun can have a significant impact on its energy demands. Many ancient societies understood this. Whenever they had a choice, cave dwellers across the northern hemisphere selected sites with southern exposure. This increased solar heat gain in winter while minimizing summer gains.

Because of the slight tilt in the axis of the Earth, i.e. 23.5 degrees in relation to the orbit of the earth around the sun, the position of the sun in the sky changes throughout the year. In the summer the sun is at a higher point in the sky than it is in the winter. This shifting solar position is illustrated in Figure 1; however, the exact angles for the given times will differ depending on exactly where in the northern hemisphere you are located.

Figure 1. Seasonal change in location of the sun in the northern hemisphere (exact angles may change depending on specific location)



Նկար 1. Արեգակի դիրքի տարեկան փոփոխությունը Հյուսիսային կիսագնդում (անկյունների ճշգրիտ արժեքները կախված են տեղի աշխարհագրական լայնությունից)

Among the most famous cave dwellings utilizing this approach are the ones in Mesa Verde, built by the Anasazi, in Colorado, US. The Anasazi people inhabited the site from around 600-1300 AD. The site benefits from the overhang cliff, which provides shade during high sun in the summer (Figure 2).

անմիջական հակոտնյա են և փոխազդող այնպիսի մեխանիկական լուծումների, ինչպիսիք են շեռուցումը, օդորակումը, ստիպողական օդափոխումը, որոնք լայնորեն կիրառվեցին հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արևմտյան երկրներում և շարունակում են արագորեն տարածվել ամենուր, ամբողջ աշխարհում:

«Պասիվ» համակարգերի նկատմամբ հետաքրքրության վերածնունդը կապված է նախ և առաջ շրջակա միջավայրի նկատմամբ կայուն բնապահպանական ճարտարապետության պահանջների հետ: Սույն ուսուցողական մոդուլի մնացած բաժիններում մենք կքննարկենք այդ «պասիվ» լուծումներից մի քանիսը, մասնավորապես՝ շենքի կողմնորոշումը, բնական օդափոխությունը, պասիվ հովացումը, բնական լուսավորությունը, ստվերումը, հով տանիքները և այլն:

Հաջորդ մոդուլներում կքննարկվեն շենքերի պատող կոնստրուկցիաներին վերաբերող՝ պասիվ լուծումների ևս մեկ կատեգորիա, այսինքն՝ շենքի որմնապատման, պատերի, հատակի և տանիքի շերտամեկուսացման, ցրտի կամրջակների վերացման, ինչպես նաև համապատասխան պատուհանների ու դռների ընտրության և կիրառման վերաբերյալ:

Շենքի կողմնորոշումը

Շենքի կողմնորոշումն Արեգակի նկատմամբ կարող է նշանակալի ազդեցություն ունենալ կառույցի էներգապահանջարկի վրա: Այդ հանգամանքը հասկանում էին հնագույն շատ հասարակություններ: Հյուսիսային կիսագնդի բնակիչները հնարավորության դեպքում գերադասում էին իրենց քարանձավներն ընտրել այնպես, որպեսզի կողմնորոշումը լինի դեպի հարավ: Դա հնարավորություն էր տալիս ավելացնել արևային շերտության ստացքը ձմռանը և նվազագույնի հասցնել ամռանը:

Արեգակի դիրքը երկնակամարի վրա տարվա ընթացքում անընդհատ փոխվում է Արեգակի շուրջ տարեկան պտույտի հարթության նկատմամբ Երկրի պտտման առանցքի փոքր՝ մոտ 23.5 աստիճան, թեքվածության պատճառով: Ամռանն Արեգակը երկնակամարի վրա գտնվում է ավելի բարձր կետում, քան ձմռանը: Նկ. 1-ում ցույց է տված Արեգակի դիրքի փոփոխությունը տարվա ընթացքում: Հասկանալի է, որ նկարում ցույց տված անկյունների տվյալ պահի ճշգրիտ արժեքները կախված կլինեն հյուսիսային կիսագնդում ձեր գտնված վայրի աշխարհագրական լայնությունից:

Figure 2. Cave dwellings of Mesa Verde located in the US



Նկար 2. Մեսա Վերդե (Mesa Verde) տեղանքի քարանձավները ԱՄՆ-ում

Cave dwellers around the world made similar site location decisions. In China, even today, more than 40 million farmers live in caves, mostly with southern-facing facades. The decision to live in caves has the advantage of sparing precious agricultural land. It also offers the advantage of being warm in the winter and cool in the summer. The decision to select south-facing caves is directly related to maximizing solar gains in winter and optimizing shade in the summer.¹

Figure 3 below illustrates the exposure of a modern house at 1pm in the winter, spring, summer, and autumn. In the summer, the eastern, and especially the western, facade will receive the most exposure to the sun.

Thus, with the long side of the building facing the south, the surface area with intense western exposure to the sun is reduced. This, in turn, reduces the need to use energy to cool the building. In the winter, the desired sun exposure and heat gain are maximized on the southern facade, reducing energy needs for heating.


Քարանձավային բնակավայրերից առավել հայտնիներից մեկը Մեսա Վերդե (Mesa Verde) է, որը կառուցվել է Անասազի (Anasazi) ցեղերի կողմից՝ ներկայումս ԱՄՆ Կոլորադո նահանգում: Anasazi ցեղերը բնակվում էին այդ տարածքներում մեր թվարկության 600-ից մինչև 1300 թվականները: Տեղանքի առավելությունն այն է, որ ժայռային ցցվածքները ամառային բարձր Արևի ճառագայթներից ստվերում են քարանձավների մուտքերը (Նկ. 2):

Ամբողջ աշխարհում ետնախորշերի քարանձավների տեղաբաշխման վայրի ընտրությունը կատարվել է այդ նկատառումներից ելնելով: Անգամ այսօրվա Չինաստանում շուրջ 40 միլիոն գյուղացիական տնտեսություններ բնակվում են հիմնականում հարավային ճակատային կողմնորոշման քարանձավներում: Բնակեցման քարանձավային տարբերակն ունի այն առավելությունը, որ հնարավորություն է տալիս ազատել կարևոր գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ: Այն նաև նպաստում է ջերմության պահպանմանը՝ ձմռանը և սառնությանը՝ ամռանը: Քարանձավի ճակատային մասի դեպի հարավ կողմնորոշման ընտրությունը պայմանավորված է այդ հանգամանքով¹:

Նկ. 3-ում ցույց են տրված ժամանակակից տան լուսակայման (էքսպոզիցիա) պատկերները ձմռանային, գարնանային, ամառային և աշնանային օրվա ժամը 13.00-ի դրությամբ: Ամռանը արևելյան և, հատկապես, արևմտյան ճակատներն առավելագույն չափով են լուսավորվում Արևի կողմից: Այսպիսով, դեպի հարավ նայող երկար ճակատով շենքի՝ դեպի արևմուտք կողմնորոշված պատի մակերևույթի վրա Արևի ճառագայթումը նվազում է: Դա նպաստում է շենքի հովացման համար անհրաժեշտ էներգիայի քանակության նվազեցմանը: Ձմռանային շրջանում տան հարավային ճակատն ինտենսիվ լուսավորվում է Արեգակի կողմից և, հետևաբար, ջեռուցման համար պահանջվող էներգիայի քանակությունը նվազում է:

¹ Yongyan Wang, Zhongguo huangtu(Loess in China),(Xian, Shaanxi: People's Art Publishing House, 1980; "Cave Dwellings", accessed May 2013, <http://depts.washington.edu/chinaciv/3arcave.htm>

Figure 3. Seasonal change in the location of the sun and impact on shading of the south-facing facade in the northern hemisphere




Նկար 3. Արեգակի դիրքի սեզոնային փոփոխությունը և ազդեցությունը տան հարավային ճակատի ստվերացման վրա հյուսիսային կիսագնդում

Computer simulations for prototype buildings across 25 climates in the US showed that when more extensively glazed exposure is oriented to the south, total heating and cooling loads are significantly lower than those in the same building oriented east or west.² The magnitude of savings may differ significantly depending on the size of the building, amount of glazing, thermal mass³ of the building envelope, the size of overhangs, availability of shading (such as trees), etc. Some analyses by local utility companies and municipalities in the US show that the southern orientation of buildings can generate savings of up to 20% for heating and up to 40% for cooling.⁴

Դեռևս 1980-ականների կեսերին ԱՄՆ 25 կլիմայական գոտիների համար համակարգչային մոդելավորման միջոցով կատարված հաշվարկների արդյունքում ցույց տրվեց, որ բավական ընդարձակ ապակեպատված և դեպի հարավ կողմնորոշված մակերևույթներով շենքերում ձմեռային ջեռուցման և ամառային հովացման վրա էներգիայի գումարային ծախսերը զգալիորեն ավելի ցածր են, քան այդ նույն շենքերի էներգիայի ծախսերը մակերևույթների դեպի արևելք կամ արևմուտք կողմնորոշման դեպքում²: էներգիայի տնտեսման չափը կարող է եապես տարբերվել կախված շենքի չափերից, ապակեպատման մակերեսից, շենքի պատող կոնստրուկցիաների ջերմային զանգվածից³ (բացարձակ ջերմունակությունից), շենքի կառուցվածքային ելուստներից, ստվերման, այդ թվում՝ ծառերի առկայությունից և այլն: ԱՄՆ մի շարք համայնքային և քաղաքային ձեռնարկությունների գնահատականները ցույց են տալիս, որ հարավային կողմնորոշման դեպքում կարելի է հասնել մինչև 20% էներգիայի տնտեսման ձմռանը ջեռուցման վրա և մինչև 40% ամառային հովացման վրա⁴:

Figure 4. Rotation in orientation that will still offer benefits of southerly orientation



Նկար 4. Հարավային կողմնորոշման առավելությունների սահմանները

Բազմաթիվ տեղանքներ կարող են սահմանափակումներ ունենալ դեպի հարավ կողմնորոշման հնարավորությունների առումով: Հողատարածքի երկար կողմը կարող է ձգվել հյուսիսից հարավ, այդպիսով իսկ հնարավորություն չտալով օգտագործել հարավային ճառագայթումը: Միաժամանակ, դա խոսում է այն մասին, որ շենքերի կողմնորոշման վերաբերյալ պետք է մտածել դեռևս հողահատկացումների փուլում, երբ ճարտարապետներն ավելի լայն և ճկուն որոշումների հնարավորություններ ունեն: Նրանք կարող են նվազեցնել ապակեպատման աստիճանը արևմտյան ճակատում և մեծացնել՝

² Brandt Andersson, Wayne Place, Ronald Kammerud, M.Peter Scofield, “The impact of building orientation on residential heating and cooling”, *Energy and Buildings* 8 (3), 1985, 205-224, <http://www.sciencedirect.com/science/article/pii/0378778885900052>
³ Thermal mass refers to how the mass of a building can flatten out temperature fluctuations inside the building as the outside temperature fluctuates.
⁴ “Solar Site Design Is No Shady Deal”, accessed April 1991, http://oikos.com/library/solar_site_design/index.html

Many sites may be limited in their southerly exposure. The longer side of the land parcel may be north to south, thereby not allowing full utilization of southern exposure. While this highlights the need for thinking about building orientation at the urban planning and parcelization stage, architects may still have some flexibility in design. They could reduce glazing on the western facade, and instead increase glazing on the narrower northern and southern facades. Additionally, variation with an angle of plus/ minus 30 degrees from a directly southern orientation will still give you benefits (Figure 4)⁵.

Shading

Shading is the intentional creation of shade on hot summer days by structures or plants. This simple and often inexpensive solution can have a significant impact on the energy load of a building. Studies have repeatedly shown that shading can significantly lower surface and above-surface temperature of an area. Studies from the US show that the temperature of a shaded area can be up to 25°C cooler than a non-shaded area.⁶ More recent studies from the UK place that number to up to 20°C.⁷

Trees on the eastern, southern, and western sides of a building will help to reduce energy costs. The selection of tree types, however, is important. Deciduous trees, trees that shed their leaves in the fall and regain them in the spring, are most appropriate. This is because in the winter months you do not want a barrier to sunlight (Figure 5). Trees closer to buildings would also need to be pruned so that the lower part of the trunk has few branches; the crown can provide shading for the roof.

Trees that are not “solar friendly” can still be used. Evergreens can be planted on the northern side of the building. They can also be used on the western side to block the intense summer heat of the setting sun.⁸

հյուսիսային և հարավային ուղղություններում: Բացի այդ, դեպի հարավ ուղղությունից պլյուս/մինուս 30° շեղումները կարող են տալ լրացուցիչ օգուտներ (սկ. 4)⁵:

Ստվերում

Ստվերումն Արևի ճառագայթումից հատուկ պատսպարված տարածքի ստեղծումն է կառուցվածքների կամ բուսականության օգտագործմամբ: Այդ պարզ և ոչ թանկարժեք միջոցառումը կարող է զգալի ազդեցություն ունենալ շենքի էներգապահանջարկի վրա: Բազմաթիվ հետազոտություններ ցույց են տվել, որ ստվերումը կարող է զգալիորեն իջեցնել ստվերված մակերևույթի և այդ գոտուց վեր գտնվող մակերևույթի ջերմաստիճանը: Ամերիկյան հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ ստվերված մակերևույթի ջերմաստիճանը կարող է 25°C-ով ավելի ցածր լինել չստվերված մակերևույթի ջերմաստիճանից⁶: Միացյալ Թագավորությունում ավելի ուշ կատարված ուսումնասիրություններն այդ ցուցանիշը սահմանում են մինչև 20°C⁷:

Շենքի արևելյան, հարավային և արևմտյան կողմերի ծառերը նպաստում են շենքի էներգապահանջարկի կրճատմանը: Ծառատեսակի ընտրությունն, այնուամենայնիվ, չափազանց կարևոր է: Սաղարթավոր ծառերը և այն ծառերը, որոնք աշնանը տերևաթափ են լինում, իսկ գարնանը վերականգնում են տերևածածկը, ամենահարմար ծառատեսակներն են: Դրա պատճառը պարզ է՝ ձմեռային ամիսներին դուք ավելի քիչ արգելքներ եք ցանկանում ունենալ արևային էներգիայի համար (սկ. 5): Շենքին մոտ աճող ծառերը նույնպես պետք է համապատասխանաբար մշակվեն այն հաշվով, որ բնի մասը հնարավորինս զուրկ լինի ճյուղերից, իսկ սաղարթը՝ հնարավորինս բարձր, որպեսզի ամառային արևային ճառագայթումից ստվերի շենքի տանիքը:

Կարող են օգտագործվել նաև Արեգակի էներգիայի օգտագործմանը չնպաստող ծառեր: Մշտադալար ծառերը կարող են տնկվել շենքի հյուսիսային պատի երկայնքով: Դրանք կարող են օգտագործվել նաև արևմտյան կողմից, որպեսզի ամառային տապին մեղմացնեն մայր

⁵ “Passive Solar Home Design”, accessed April 2012, <http://energy.gov/energysaver/articles/passive-solar-home-design>
⁶ “Trees and Vegetation”, accessed May 2013, <http://www.epa.gov/heatisland/mitigation/trees.htm>. It is noteworthy that one to two degrees Celsius of this reduction is attributable to evapotranspiration, the process of a tree or other plants releasing evaporation, thereby cooling its surroundings.
ԱՄՆ շրջակա միջավայրի պահպանման գործակալություն (<http://www.epa.gov/heatisland/mitigation/trees.htm>): Ուշագրավ է, որ այս մեկից երկու աստիճան Ցելսիուսի նվազումը վերագրվում է գոլորշացման-ներծծման գործընթացներին, երբ ծառերը կամ այլ բույսերը արտադրում են գոլորշի, այսպիսով սառեցնելով միջավայրը:
⁷ David Armson et al, “The effect of tree shade and grass on surface and globe temperatures in an urban area”, *Urban Forestry & Urban Greening* 11 (3), 2012, 245-255, <http://www.sciencedirect.com/science/article/pii/S1618866712000611>
⁸ “Solar Site Design Is No Shady Deal”, accessed April 1991, http://oikos.com/library/solar_site_design/index.html

Figure 5. Shading and building orientation



Նկար 5. Ստվերումը և շենքի կողմնորոշումը

Building designers should consult with an arborist or landscape architect to make appropriate tree selection to gain maximum benefit for the building from the shading effect of trees.

Use of plants for shading is a common practice. In Yerevan and Tbilisi, cities with hot and very sunny summers, a common solution has been planting vines which filter a substantial percentage of direct sunlight. Grape vines are traditionally used, although other vines are also seen (Figure 6). The advantage of these vines is that they provide shade in the summer and allow light and warmth to pass through in the winter. For the pitfalls of the improper use of vines or use of damaging vine species refer to a landscape specialist or an authoritative information source.⁹

In addition to plants, physical, structural shading is also frequently used. Some of these physical shades, such as exterior wooden shutters, are traditionally used in many parts of the world. These will be discussed in the daylighting section below, especially in the “solar shading devices” section.

մտնող Արեգակի ջերմության ճառագայթման ազդեցությունը⁸:

Շենքերի նախագծողները պետք է խորհրդակցեն անտառագետների և լանդշաֆտային ճարտարապետների հետ համապատասխան ծառատեսակների ընտրության հարցում, քանի որ ճիշտ ընտրությունը կնպաստի ստվերումից առավելագույն օգուտի ստացմանը:

Բուսականության օգտագործումը ստվերված մակերևույթների ստացման համար բավական տարածված երևույթ է: Շատ տաք և արևային ամառներ ունեցող երևանում և Թբիլիսիում տարածված է խաղողի վազերով արտաքին պատերի պատումը, որոնք զգալիորեն «գտում» են Արևի ուղիղ ճառագայթումը: Խաղողի վազերն ավանդաբար են կիրառվում, երբեմն հանդիպում են նաև այլ բույսերի վազեր (նկ. 6):

Այդ վազերի առավելությունն այն է, որ դրանք ամռանը ստեղծում են ստվերված մակերևույթներ և ձմռանը բաց են թողնում լույսը և ջերմությունը: Խուսափելու համար վազերի սխալ ընտրության կամ վնասակար վազերի ընտրության թակարդն ընկնելուց, անհրաժեշտ է խորհրդակցել համապատասխան մասնագետների հետ կամ դիմել տեղեկատվության հեղինակավոր աղբյուրների⁹:

⁹ For a very informative discussion of building damage caused by various species of vines, see: http://www.fassadengruen.de/eng/uw/climbing_plants/uw/greening/greening/building-damages.htm

Figure 6. Use of vines for shading is common in the Caucasus, including in Yerevan. It is a good practice that can be used to enhance design and building occupant comfort. In the rendering of the bottom photo, the western facade of a US Federal Building in Portland, Oregon, has trellises with vines growing on them. For updates, see the site for the project architect SERA (serapdx.com).



Նկար 6. Վազերի օգտագործումը սովորման նպատակով տարածված է Կովկասում, ներառյալ Երևանում: Բնակիչների հարմարավետության ու շենքերի դիզայնի առումով դա լավ միջոցառում է: Ստորին նկարում ցույց է տրված ԱՄՆ Ֆեդերալ շենքի (Պորտլենդ, Օրեգոն նահանգ) արևմտյան ճակատը, որի վրա տեղադրված ճաղերով աճում են խաղողի վազերը: Մանրամասներին ծանոթանալու համար դիմել SERA ճարտարապետական նախագծի կայքին՝ SERA (serapdx.com)

As a final note, curtains and internal shades are also frequently used solutions from an energy efficiency perspective. If we want to keep interiors cool, it is best to prevent the heat from entering the building in the first place. It helps if the exterior-facing side of the curtain is white or a color with a high albedo (see “cool roof” section below for more in-depth discussion of albedo). When trying to keep a building warm, curtains can also be very helpful.

Բացի բույսերից, գոյություն ունեն ֆիզիկական, կառուցվածքային սովորում, որը նույնպես հաճախ է օգտագործվում: Այդ ֆիզիկական սովորման որոշ տարբերակներ, ինչպես, օրինակ, փայտյա արտաքին փեղկեր, ավանդաբար օգտագործվում են աշխարհի տարբեր ծայրերում: Դրանք կուսումնասիրվեն հետագայում՝ ցերեկային լուսավորությանը և արևային սովորմանը վերաբերող բաժիններում:

Որպես վերջնական դիտարկում՝ անհրաժեշտ է նշել, որ ներքին շերտափեղկերը և վարագույրները նույնպես հաճախ կիրառվող և

Daylighting

Lighting is a major expense, especially for commercial buildings. Using natural lighting during daytime is sensible. Natural lighting also tends to improve psychological well-being, increase worker satisfaction levels, and reduce visual stress.

To use natural light effectively, however, buildings have to be designed properly. To have a room or a building where the sun directly shines into a room, creating not only excessive heat but also glare that prevents adequate visual performance can only make matters worse for the occupants. On the other hand, having shades and shutting them and turning the lights on during daytime is a result of bad design.

Designing buildings that take maximum advantage of natural light to produce both diffused and sufficiently bright light is the practice of daylighting. Through daylighting strategies, architects bring natural light as deeply as possible into a building while controlling glare and direct sun. A masterful example of that was Yerevan's Enclosed Market (Figure 7).

Figure 7. Yerevan's Enclosed Market, built in the 1950s and designed by architect Grigor Aghababyan, was a masterpiece of daylighting



Նկար 7. Երևանի ծածկած շուկան, կառուցված 1950-ական թվականներին, ճարտարապետ՝ Գրիգոր Աղաբաբյան: Համարվում է ցերեկային լուսավորման գլուխգործոց

Another masterpiece of daylighting, although at a larger, iconic scale, is the glass dome at the Reichstag in Berlin, designed by Norman Foster (Figure 8).

Էներգաարդյունավետ լուծումներ են, սակայն, այնուամենայնիվ, պետք է նշել, որ եթե ցանկանում ենք պահպանել ներքին շերմային հարմարավետությունը, ապա առաջնային խնդիրը շերմության՝ դեպի կացարան ներթափանցման արգելակումն է: Օգտակար կլինի նաև, եթե շերտափեղկի կամ վարագույրի արտաքին կողմի մակերևույթը լինի սպիտակ գույնի, կամ որևէ մեկ այլ՝ բարձր ալբեդո ունեցող գույնի (տե՛ս ստորև բերվող «Յո՛վ տանիքներ» բաժինը՝ ալբեդոյի հասկացության ավելի խոր ընկալման համար): Եթե դուք փորձում եք կացարանում պահպանել շերմությունը, ապա շերտափեղկերը կամ վարագույրները կարող են շատ օգտակար լինել:

Ցերեկային լուսավորություն

Լուսավորությունը Էներգասպառման կարևոր ծախսային հոդված է, հատկապես՝ առևտրային շենքերի համար: Բնական լուսավորության օգտագործումը ցերեկային ժամերին միանգամայն տրամաբանական է: Բնական լուսավորությունը նաև բարելավում է հոգեբանական բարեկեցությունը, բարձրացնում աշխատողների բավարարվածության մակարդակը, ինչպես նաև նվազեցնում է տեսողական սթրեսը:


Բնական լուսավորության արդյունավետ օգտագործման համար, այնուամենայնիվ, շենքերը պետք է համապատասխան ձևով նախագծվեն: Եթե մի սենյակում կամ շենքում Արևն անմիջապես փայլում է տարածքի ներսում և ստեղծում է ոչ միայն ավելցուկային շերմություն, այլ նաև պայծառ լույս, որը խանգարում է աղեկվատ տեսողական ընկալմանը, ապա այդպիսի լուսավորությունը միայն խնդիրներ է առաջացնում սենյակում կամ շենքում գտնվողների համար: Մյուս կողմից՝ բնական լույսի մուտքի արգելակումը և արհեստական լուսավորության կիրառումն արդեն վատ նախագծման արդյունք է:

Բնական լուսավորության պրակտիկայում կիրառում են շենքերի նախագծման այնպիսի սկզբունքներ, որոնց դեպքում բնական լույսից ստացվում է առավելագույն արդյունքը ցրված լուսավորության տեսքով: Ցերեկային լուսավորության այդ ռազմավարության հիման վրա ճարտարապետները բնական լույսը հասցնում են շենքի հնարավորինս ավելի խորին տարածքներին՝ հսկելով Արևի ուղղակի ճառագայթման փայլքերի (ցուլքերի) առաջացումը: Այդ ռազմավարության կիրառման լավագույն օրինակներից մեկը Երևանի ծածկած շուկան է (Նկ. 7):

Բնական լուսավորության մեկ այլ գլուխգործոց է, թեկուզ և առավել մեծամասշտաբ ու խորհրդանշական, Ռայխստագի ապակյա գմբեթը (Նկ. 8, ճարտարապետ՝ Նորման Ֆոստեր):

The poetry of the design allows natural light from the outside world to shine on parliamentary debates and allows ordinary citizens to walk above their representatives down below. The dome cuts down on the use of electricity for lighting, as natural daylight shines through the mirrored cone down into the parliament chamber. The sunlight can be so intense that a screen tracks the sun to soften the glare.

Figure 8. Interior view of the glass dome of the Reichstag in Berlin, Germany, by architect Norman Foster, another iconic masterpiece of daylighting. The dome also allows for natural ventilation from the top of the dome, similar to the Pantheon in Rome



Նկար 8. Ռայխստագի շենքի ապակյա գմբեթի ներքին տեսքը (Բեռլին, Գերմանիա), ճարտարապետ՝ Նորման Ֆոստեր, մեկ այլ գլուխգործոց ցերեկային լուսավորության: Գմբեթի վերին մասը նպաստում է բնական օդափոխմանը՝ Զոմբի պանթեոնի նման:

Բացի ստեղծագործության պոետիկականությունից, երբ արտաքին աշխարհի բնական լույսը փայլում է խորհրդարանական բանավեճերի վրա և երբ հասարակ քաղաքացիները վեր ու վար անելով կարող են հետևել իրենց ընտրյալներին, հնարավորություն կա կրճատել էլեկտրաէներգիայի ծախսը լուսավորության վրա, քանի որ ցերեկային լույսն անդրադառնալով կոնական հայելիների վրա՝ թափանցում է խորհրդարանական դահլիճի ստորին մասերը:

Արեգակի լույսը կարող է այնքան ուժեղ լինել, որ լուսային փայլքերի մեղմման համար Արևին հետևող էկրանի գործարկման անհրաժեշտություն առաջանա:

Բացի այդ երկու նշանակալից օրինակներից, բնական լուսավորությունը կարող է օգտագործվել նաև սովորական առևտրային կամ բնակելի շենքերում: Գոյություն ունեն տվյալ շենքի ցերեկային բնական լուսավորության օպտիմալ լուծումների և մոտեցումների զանազան տարբերակներ¹⁰: Դուք կարող եք նկատել, որ դրանց մի մասը կապված է այլ «պասիվ» լուծումների հետ, որոնք նույնպես ներկայացված են այս մոդուլում:

- Օպտիմալացված ցերեկային լույսով շենքի մակերևույթ՝ հարավային և հյուսիսային կողմերից առավելագույն լուսավորություն, խուսափելով արևելյան և արևմտյան կողմերից ուղղակի լուսավորությունից: Մենյակի առավելագույն խորությունը կարող է լինել 18-20 մ, որը կապահովի արդյունավետ լուսավորություն հյուսիսային և հարավային կողմերից,
- Պատուհան/պատ մակերեսների հարաբերության հարմարեցում կլիմայական պայմաններին՝ հավասարակշռել ապակեպատ ծածկույթից թափանցած լույսը պատի ջերմամեկուսիչ հատկությունների հետ: Նույնիսկ ամենակատարյալ պատուհանների արդյունավետությունը երբեք չի կարող հասնել պատի ջերմային արդյունավետությանը: Լույսի և ջերմամեկուսացման միջև պետք է հաստատվի որոշակի հավասարակշռություն,
- Բարձր կատարելիության ապակեպատում՝ դրանք ապակիներ են, որոնցով թափանցում է ավելի շատ լույս, քան ջերմություն: Այդպիսի դեր կարող են կատարել երկշերտ կամ եռաշերտ ապակյա ծածկույթով և հերմետիկ կառուցվածքով պատուհանները,
- Ցերեկային լույսի առանձին օպտիմալացված նախագծում՝ ապակեպատ պատուհանով թափանցած լույսի տեսանելիության պարզության և թափանցած լույսի՝ պատուհանի

In addition to the two iconic buildings noted above, daylighting can also be applied to ordinary commercial and residential buildings. There are various approaches and solutions that can be employed to achieve optimal daylighting for a given building.¹⁰ Some are linked to other “passive” solutions discussed in this module:


- Daylight-optimized building footprint - maximizing southern and northern exposure and avoiding direct eastern and western sun. A room depth of 18-20 meters seems to be the maximum for effective daylighting from northern and southern light.
- Climate-responsive window-to-wall area ratio - balancing the light brought in by glazing with the insulation properties of walls. Even the most high-performance windows cannot achieve the thermal performance of walls. The trade-offs between light and insulation should be balanced.
- High-performance glazing - these would be windows that would allow in more light than heat. Double or triple glazed windows with adequate sealing and construction can perform this role.
- Daylighting-optimized fenestration design - balancing between clarity of vision provided by window glazing and diffusion of light by the window. Not every part of a window needs to offer a full view to building occupants. In reducing viewing clarity, glare may be reduced.
- Skylights and tubular daylight devices - skylights allow ample light to enter a room. The location will have different impacts depending on direct or diffused light. In the summer months it may be a source of glare if installed facing east, west, or south and has no shading. It is also a source of heat gain or loss. Therefore, its use has to be considered in a building’s energy and light balance.
- Daylight redirection devices (such as light shelves) - light shelves are used to block direct sunlight entering a room, while at the same time deflecting it to the ceiling of a room which then, in turn, spreads it throughout the room (Figure 9).

կողմից ցրման միջև հավասարակշռում: Պատուհանի ոչ բոլոր մասերը պետք է շենքում գտնվողներին տան լրիվ տեսարանը: Նվազեցնելով տեսարանի պարզությունը՝ լույսի պայծառությունը կարելի է կրճատել,

- Լուսային հորեր և ցերեկային լույսի խողովակավոր հարմարանքներ՝ ձեղնահարկային պատուհանները սենյակ մուտք գործելու համար բավարար լուսաթափանց են: Այդ պատուհանների դիրքը կախված է լույսի բնույթից՝ ուղիղ թե՛ ցրված: Ամառային ամիսներին դրանք կարող են հանդիսանալ վառ լույսի աղբյուր, եթե կողմնորոշված են դեպի արևելք, արևմուտք կամ հարավ և ստվերված (էկրանավորված) չեն: Այդ պատուհանները նաև ջերմության ներհոսքի կամ կորստի աղբյուր են: Այդ առումով դրանց օգտագործման ժամանակ պետք է հաշվի առնել թե՛ լուսային, թե՛ ջերմային հաշվեկշիռները,
- Ցերեկային լույսի ուղղվածության փոփոխման հարմարանքներ (ինչպես, օրինակ՝ լուսային «դարակները»)՝ թեթև լուսային «դարակներն» օգտագործում են, որպեսզի արգելափակեն սենյակ թափանցող լույսի ուղիղ ճառագայթները, որոնք ուղղվում են դեպի առաստաղ և այնուհետև ցրված ճառագայթները տարածվում են ամբողջ սենյակով մեկ (սկ. 9):

¹⁰ Greg Ander, *Daylighting*, Washington, D.C: FAIA, Whole Building Design Guide, <http://www.wbdg.org/resources/daylighting.php>

Figure 9. Use of light shelves allows for shading against direct light and the reflection of indirect light deeper into the interior space



Summer-Winter Solstice / ամառային-ձմեռային արևադարձ, Spring-Autumn Equinox / գարնանային-աշնանային գիշերահավասար

Նկար 9. Լուսային դարակները ստվերում են ուղիղ լույսը և նպաստում ցրված լույսի թափանցմանը դեպի ներքին տարածքի խորքը

- Solar shading devices - there is a wide variety of solutions for solar shading. Devices may include louvers, screens, shelves, or plants. One architectural firm that has used such shading devices to an iconic effect is Morphosis (Figure 10). There are many more common shading structures that can be integrated into building design (Figure 11).
- Արևային պաշտպանիչ սարքեր՝ գոյություն ունեն Արևի ճառագայթումից պաշտպանող սարքերի բազմաթիվ տեսակներ: Դրանք կարող են լինել շերտափեղկեր, էկրաններ, դարակներ կամ բույսեր: Ճարտարապետական ամենահայտնի ընկերությունը, որն օգտագործել է այդ պաշտպանիչ (ստվերող) սարքերը և հասել է նշանակալի հաջողությունների, Morphosis-ն է (նկ. 10): Կան նաև բազմաթիվ այլ լուծումներ, որոնք կարող են ներգրավվել շենքերի օպտիմալ նախագծման գործընթացում (նկ. 11):

Figure 10. The iconic double skin of the architectural firm Morphosis. Pictured is the Cooper Union building in New York.



Նկար 10. Cooper Union շենքի արտաքին երկշերտ «մաշկը» (Նյու Յորք): Morphosis ճարտարապետական ընկերություն


Figure 11. Commonly used structural and architectural elements to provide shade. The bottom photo shows the American University of Armenia's new building with structural shading used for the southerly glass walls



Նկար 11. Ստվերման կառուցվածքային և ճարտարապետական տարրերի օգտագործումը: Ներքևում գտնվող նկարում պատկերված է Հայաստանի ամերիկյան համալսարանի նոր շենքը, որի դեպի հարավ կողմնորոշված ապակեպատ լուսամուտներին կիրառված է կառուցվածքային ստվերում:

- Daylight-optimized interior design - often overlooked parts of daylighting - include furniture design, spatial planning, and room surface finishes and colors. All of these have an impact on the distribution of light within a space (Figure 12).
- Օպտիմալացված ցերեկային լույսի ինտերիերային նախագծում՝ բնական լուսավորության նախագծման մի որոշակի մաս հաճախ արհամարհվում է: Դրանք կահույքի, տարածության և մակերեսի պլանավորմանը, այդ թվում՝ ծաղիկների ու գույների ընտրության, հարցերն են: Դրանք բոլորը որոշակի ազդեցություն են թողնում սենյակի ողջ տարածքում լույսի բաշխման վրա (նկ. 12):

Figure 12. A number of factors have an impact on the movement of light inside a building



Նկար 12. Ծեղքի ներսում լույսի տարածման վրա բազմաթիվ գործոններ են ազդում

While some architects may have a deep sense of light and how it enters and moves in space, employing many of the solutions above complicates analysis considerably. To fully understand the impact of all decisions, designers often have to rely on simulation software.¹¹ To move away from theory and begin designing with daylighting effectively, the student would be well advised to take design studio courses and undertake individual studies on the subject.¹²

Cool Roofs¹³

Roofs can be a great source of heat loss from the interior of buildings, especially during cold seasons when you need to maintain heat levels inside a building. That is why the insulation requirements of roofs are generally higher than those of walls (is discussed in greater detail in Module 5).

Roofs can do the opposite in hot seasons. When there is abundant sunlight, roofs can become a source of heat gain in buildings.

Շատ ճարտարապետներ կարող են բավական խոր գիտելիքներ ունենալ բնական լույսի դեպի շենքի ներս թափանցման և տարածման վերաբերյալ, սակայն վերը թվարկված զանազան միջոցների կիրառումը չափազանց դժվարեցնում է վերլուծության հնարավորությունները: Ընդունված լուծումների ազդեցությունը ամբողջությամբ ընկալելու համար նախագծողները հաճախ դիմում են համակարգչային ծրագրերի¹¹ և մոդելավորման օգնությանը: Չուտ տեսական դրույթներից հեռանալու և բնական լուսավորության լավագույն լուծումների կիրառման գործնական գիտելիքներ ստանալու նպատակով ուսանողներին խորհուրդ է տրվում մասնակցել ճարտարապետական արվեստանոցներում կազմակերպվող դասընթացներին՝ անձամբ մասնակցություն ցուցաբերելով կոնկրետ նախագծերի մշակման աշխատանքներին¹²:

Հով տանիքներ¹³

Տանիքները կարող են զգալի ջերմային կորուստների աղբյուր հանդիսանալ, հատկապես տարվա ցուրտ ժամանակահատվածում, երբ,

¹¹ Christoph Reinhart and Jan Wienold, “The daylighting dashboard - A simulation-based design analysis for daylit spaces”, *Building and Environment* 46 (2), 2011, pp.386-396, <http://www.sciencedirect.com/science/article/pii/S0360132310002441>

¹² “Daylighting”, accessed May 2013, <http://ocw.mit.edu/courses/architecture/4-430-daylighting-spring-2012/index.htm>

¹³ This section relies substantially on U.S. Department of Energy, *Guidelines for Selecting Cool Roofs*, Washington, D.C., 2010, <http://apps1.eere.energy.gov/buildings/publications/pdfs/corporate/coolroofguide.pdf>. At times the text is directly copied.

Այս բաժնի նյութը մեծապես հիմնվում է հետևյալ հրապարակման վրա. U.S. Department of Energy, “Guidelines for Selecting Cool Roofs” (July 2010): Որոշ հատվածներ մեջբերված են ամբողջությամբ:

On hot summer days, the surface temperature of a black asphalt roof (commonly used in many parts of the world) can reach up to 70°C. The high temperatures on roofs can reduce the comfort of spaces inside buildings that are not air-conditioned. They can significantly increase energy costs for air conditioning. They may also reduce the service life of roofing material.


One inexpensive solution is to install cool roofs. Similar to how light-colored clothing keeps a person cool on a sunny day, cool roofs use solar-reflective surfaces to maintain lower roof temperatures. Traditional dark roofs can reach temperatures of 70°C or more in the summer sun. A cool roof, under the same conditions, could keep to a temperature of 28°C or so (Figure 13).

ընդհակառակը, կացարանի ներսում ջերմությունը պահպանելու անհրաժեշտություն կա: Ահա թե ինչու տանիքի մեկուսացումը ավելի կարևոր դեր է խաղում, քան պատերինը (մանրամասն՝ տե՛ս Մոդուլ 5):

Տարվա տաք շրջանում տանիքները կարող են կատարել ճիշտ հակառակը: Առատ արևահարության ժամանակ տանիքները կարող են դեպի տարածք ջերմության ներհոսքի աղբյուր դառնալ: Ամառային շոգ օրերին ասֆալտապատ/բիտումապատ (օգտագործվում է աշխարհի շատ երկրներում) տանիքի մակերևույթի ջերմաստիճանը կարող է հասնել մինչև 70°C-ի: Տանիքի բարձր ջերմաստիճանը կարող է նվազեցնել տարածքի ներսի հարմարավետության մակարդակը, եթե այն կահավորված է օդորակման սարքերով: Բարձր ջերմաստիճանը կարող է նաև նշանակալիորեն բարձրացնել օդորակման վրա էներգիայի ծախսը և կրճատել տանիքի ծածկի կյուրթի ծառայության ժամկետը: Համեմատաբար ոչ թանկ լուծումներից մեկը կարող է լինել հով տանիքի տարբերակը: Ինչպես որ բաց գույնի հագուստը պահպանում է մարդու թարմությունը արևոտ օրվա

ընթացքում, այնպես էլ հով տանիքն օգտագործում է արևային ճառագայթներն անդրադարձնող մակերևույթներ՝ տանիքի ջերմաստիճանը ցածր պահելու համար: Ավանդական մուգ գույնի տանիքներն ամառային ճառագայթման տակ կարող են տաքանալ մինչև 70°C և ավելի բարձր, հով տանիքները նույն պայմաններում տաքանում են մինչև շուրջ 28°C (սկ. 13):

Figure 13. Thermographic view of roof being transformed into a cool roof. Note that the top left corner that is not yet fully converted is substantially hotter (left: roof coating in progress, right: infrared view)



Նկար 13. Տանիքի ջերմագրաֆիկ պատկերը, որը վերածնակափոխվել է հով տանիքի: Ուշադրություն վերևի ձախ անկյունին՝ տանիքի այդ հատվածը դեռևս ամբողջությամբ չի վերափոխվել և զգալիորեն ավելի տաք է (ձախում՝ տանիքի ծածկման ընթացքը, աջում՝ տանիքի ինֆրակարմիր պատկերը):

Solar reflectance and *thermal emittance* are the two key material surface properties that determine a roof's temperature. They each range on a scale from 0 to 1. The larger these two values, the cooler the roof will remain in the sun.

Solar reflectance, also often referred to as the “albedo”, is the fraction of sunlight that a surface reflects. Sunlight that is not reflected

Տանիքի ծածկի կյուրթի երկու կարևորագույն ֆիզիկական բնութագրերից են Արևի ճառագայթների անդրադարձման և սեփական ջերմային ճառագայթման հատկությունները, որոնք և որոշում են շենքի տանիքի ջերմաստիճանը: Այդ ֆիզիկական հատկությունները գնահատվում են պայմանական սանդղակով՝ 0-ից մինչև 1 ցուցանիշներով: Որքան ավելի բարձր են այս երկու բնութագրերի արժեքները, այնքան ավելի հով կլմա արևահարվող տանիքը:

is absorbed as heat. Solar reflectance is measured on a scale of 0 to 1. For example, a surface that reflects 55% of sunlight has a solar reflectance of 0.55. Most dark roof materials reflect 5-20% of incoming sunlight, while light-colored roof materials typically reflect 55-90%. Solar reflectance has the biggest effect on keeping your roof cool in the sun. For typical reflectance values for different surface materials, see Figure 14. The solar reflectance of roofing products are not typically based on initial values, but rather on 3-year aged values. This is because the reflectance of a surface changes over time, with most rapid change happening in the first 3 years of its use.

Figure 14. Solar reflectance values of various surface materials



բարձր անդրադարձունակ 0.60-0.70
 ալյուսավոր 0.10-0.15 սպիտակ ներկ 0.50-0.90
 գունավոր ներկ 0.15-0.35 ձյութ և կոպիճ 0.03-0.18
 կարմիր/շականակագույն կղմինդր 0.10-0.35

Նկար 14. Մակերեսները պատող տարբեր նյութերի արևային անդրադարձման մեծությունները

